

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՆՏԻՆ, Այսին փողոց

ՄՈՒԿԱԹԹԱՄԻՐ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser

la Rédaction du Journal PHAROS

LE CAIRE — RUE ABDIN

vis-à-vis du «Mokattam»

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՊՐԵՍՏԱՆԻ ԶԱՄԱՐ

Տարեկան . . . . . 702. 00 100

Վեցամսեայ . . . . . 35

Եռամսեայ . . . . . 30

ՕՏԻՐ ԲԱՐՈՒՆԵՐՈՒ ՇՊԵՏ


Տարեկան . . . . . 26

Վեցամսեայ . . . . . 14

ԵՏ ՁԻ ՏՐՈՒՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՆՈՒՄ

ՆՈՒՆ Է ԳՐՈՒԹԻՒՆ



# ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՐԲԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրեն—Խմբագիր Յ. ԱՆՓՐԱՐ

## ՊԶՏԻԿ ԴԱՍԵՐ

### ՄԵԾ ՏՂԱՆԵՐՈՒ

Ի ծնէ բանիմաց, խառնուածքով ճարպիկ, պարկեշտ... Երբ հարկը պահանջէ, երբեմն ազնիւ, ընդհանրապէս կոշտ, ահա ինչպէս շինած է զմեզ ամենակարողն Աստուած:

Փառք իրեն... որովհետեւ ասկէ պակաս յատկութիւններ ունեցող ազգեր ալ կան տիեզերքի չորս կողմը սփռուած:

Այս ամէնը աղէկ. բայց չեմ կարծեր որ այն ամականները որոնց հով որակեցի հայը, բաւական ըլլան պատկերացնելու կատարեալ տիպարը մարդուն՝ որ դատապարտուած է ապրելու այն դարուն մէջ որուն սեմին վրայ կը գտնուինք այս պահուս:

Այսօր այնպիսի ժամանակներու և այնպիսի միջավայրերու մէջ ապրել դատապարտուած ենք որ այդ նախնական և աստուածատուր յատկութիւնները չեն տար մեզի բնկերութեան մէջ bonne figure մը ընելու գիւրութիւնը և չեն ներքի որ միւսը ունենանք այն աշխարհին մէջ որ «լուսաւորեալ» ամականով մկրտուած է:

Ինչպէս իրերը, ինչպէս ապրանքները նոյնպէս մարդիկ ալ իրենց հոնն, կատարելութիւնը ունենալու են ճակատաբաց դէմ գնելու համար ժամանակին պահանջներուն որոնք թէ՛ շատ զգուարահաճ են և թէ՛ անողորմ:

Նիւթը, առարկան, իւրը, տեսէք, օրէ օր ներանալու սահմանուած են: Ձեր աչքին առջև բերէք, օրինակի համար, նախկին ի՞նչ անպարզ առաքատանաւերը և արդի հօթերը, ձեր մեծ հօր ժամացոյցին քով դրէք ձեր գրպանի ռըվոնքրուարը, նախկին կօշիկներու քով՝ ձեր տիկնոջ սփորթիւնները, աչքի առջև բերէք խառնուած կէտիկ ամիրային տունը և այն արարքը մը որ կը բնակի, երբեմնի փայլունքը և այս օրուան Վիքորիտները, և ասոնց պէս միլիոնաւոր օրինակներ կրնաք գտնել որոնք պիտի համոզեն զձեզ թէ ժամանակը և բարքերը ազնուացուցեր, բարակացուցեր, նրբացուցեր են ամեն բան: Մարդիկ ալ, բնականաբար չէին

կրնար դերը միայն բարեշնչման այդ հոսանքին ազդեցութենէն և հետզհետէ ասոնք ալ նրբացած, ազնուացած և հոն մը ունեցած են և աւելին ունենալ կ'աշխատին:

Մենակ մենք, Հայերս ենք՝ իբրեւ շուսաւորեալ աշխարհին մէջ մտնելու իրաւունքներ ունեցող ազգ մը՝ որ կէտիկ ամիրային տան պէս մնացած ենք այնպէս ինչպէս որ էինք ասկէ յիսուն կամ հարիւր տարի առաջ:

Բնին արդուը մեր վրայէն չէ անցած՝ տալու համար մեզի այն փայլը որու կը կարօտինք... Թախտիւ ազգ մը ըլլալէ դադարելու համար:

—Հայերը աղէկ մարդեր, սակայն տակաւին յղկուած, նրբացած չեն: Այս խօսքը ըսել տալու չենք օտարներուն:

Պզտիկ ճիգ մը, բիշ մը բարեկամեցողութիւն, անշուշտ քիչ մըն ալ աշխատանք, և հաւատացէք որ, այն խելով որ նախախնամութիւնը մեզ տուած է, կարելի պիտի ըլլայ մեզի լրացնել մեր այս պակասն ալ զոր մեր ամեն ուրիշ առաւելութիւններով չենք կրնար կոր պարտրկել, ափսոս: Ձեզի պզտիկ անէքթոտ մը պատմեմ աւելի լաւ բացատրելու համար միտքս:

Անցեալ տարի երբ Անթոն Զարեհ եկաւ, մենք, Հայ երիտասարդներս, ուզեցինք հացկերոյթ մը սարքել, ի պատիւ այդ մեծանուն հայասերին: Ոչինչ կը պակսէր մեզի այդ ծրագիրը իրականացնելու համար: Յանձնախումբ մը կրնայինք կազմել, դրամ կար մէջտեղը, ֆոնթիւնանթալէն սրահ մը մեր տրամադրութեան տակ պիտի դրուէր և մեր բոլոր ընկերներն ալ ամեն տեսակ զոհողութիւն ընելու պատրաստ էին:

Մեր մէջ հարուստն ալ կար, բարեկեցիկն ալ. դարգացածները մէկէ աւելի էին, բանի մը լեզու խօսող երիտասարդներ չէին պակսէր մեր մէջ, վերջապէս Հայ ընկերութեան շնորհքով ըսուած դասուն կը պատկանէինք:

Ամենքն ալ պարագային յարմար ձեռք մը հագուստ ունէին կամ կըրնային ունենալ:

Վերջին պահուն սակայն հացկե-

րոյթը տալէ վազ անցանք, պզտիկ պատճառի մը համար զոր ամենալով կը յիշատակեմ:

Անորդը այդ երիտասարդներուն մէջ վեց հոգի լիար ու պատշաճաբար մը գործածելու եղանակը գիտնաւ:

Վրանիս խնդացնել չուզեցինք և պարզ այցելութեամբ մը կարճ կապեցինք այդ համակրութեան ցոյցը հանդէպ այդ պատուական Փրանսացիին:

Թ. Ա.

(Շարունակելի)

## ՀԵՆՐԻԲ ԻՊԱՆԵՆ

(ԹԱՏԵՐԱԳԻՐ-ԽՄԱՍՏԱՍԵՐ)

(Շար. Յախորդ թիւէն)

Թէ ինքը անմասնակից իր հայրենիքի գործերուն, բայց անաբարք մը չէ եղած հանգէպ անոր գանազան վիճակներուն, և իր զգացումներուն՝ իր ազգակիցներուն հետ ըլլալը մէկէ աւելի պարագաներու մէջ յայտնած է: Եթէ իր գրածներն ալ մեր աչքին առջև ունենանք, բայց ի «Ֆապիլինայէն» և «Կայսրը և Կալիլեացիները» ամէնուն ալ նիւթը առնուած է հիւսիսի պատմութենէն և առասպելներու աշխարհէն:

Նոյն իսկ իր արդի կեանքին առնուած թատերգութիւնները, որոնցմով ինքը ամէնէն աւելի նախ արտասահմանի մէջ համբաւ չինեց, կը ներկայացնեն Նորվեգիական կեանքի և երկրի պատկերներ: Իպսէնի թատերգութիւնները նաև չունին այն սովորական դարձած կատակերգութիւններու և ողբերգութիւններու գործող անձերը, այլ իւրաքանչիւր կը ներկայացնէ իրեն յատուկ եղանակ մը մտածելու և դատելու: Իր ներկայացուցած անձերն միայն բաւթորներն են որոնք ցոյց կուտան նեղ կերպով ըմբռնուած և հաշտարար ու ներման ոգիէ զուրկ բարոյական մը: Բաւթորներու այս տիպարն զատ Իպսէնի ներկայացուցած անձերուն մէջ տիպարներ չիկան, այլ ինքնուրոյն անձեր են արիւնով և միտով լեցուն, լայն մտքի տէր ու անհատական միկնոյն ատեն: Իւրաքանչիւր իրեն համար աշխարհ մը ներկայացնող: Ու այսպէս ալ երեւակայած է թերեւ իր երկրին մարդիկը, 1874-ին Քրիսթիանիա այցելած պահուն երբ ուսանողները զինքը մեծ պատիւներով կ'ընդունէին, շատ իմաստալից կերպով կ'ըսէր անոնց թէ ինքը «Իր հայրենիքի կեանքը երբեք այնչափ լեցուն և կենսալից չէ երեւակայած, որչափ իր անկից բացակայ եղած ատենը»:

Գալով այն կէտին թէ Իպսէն իր երկրի

նախորդ գործերէն ինչ չափ ազդուած է, դժուար չէ հետեւի անոր, իր երկերուն մէջ: Գլխաւորաբար Սէօրըն Քրիսթիանիա ազդած է Իպսէնի վրայ: Թէ և յետոյ Իպսէն հանդէպ եկեղեցւոյն, ընկերութեան և վարչութեան բռնած ընթացքովը բարոյական առաձիգ դիրք մը կը ստանար Նորվեգիական գրականութեան մէջ: Մանաւանդ այնպիսի ատեն մը, ուր եկեղեցական կամ թուոյ հայրնաւորական դրոշմը իրենց վրայ չի կրող գրական ամէն արտադրութիւն արհամարհանքի և հալածանաց կ'ենթարկուէր: Ու այս է դիմաւոր պատճառը որ Իպսէն ընդհանուր Եւրոպական միտք մը կը դառնար փոխանակ Նորվեգիացի մը մնալու, հակառակ Պեթսթրոմի որ իր տիեզերական կրթութեամբը հանգիստ ազգային մը կը մնար մինչև իր ծովը: Կէտիկ Պրանտէն այս մասին կը գրէ Իպսէնի համար թէ «Ինք, զինքը իբրեւ ժողովուրդին դաւակիր, իբրեւ մէկ մասը ամբողջին, իբրեւ ընկերութեան մը մէկ անդամ չզգար. ալ մի միայն իբրեւ հանձնարեղ անհատ մը: Անհատական նութիւնը իրեն և որուն կը հատուայ և զոր կը յարգէ»:

Իրաւ է որ Իպսէն ընկերութեան և պետութեան դէմ իր գաղափարներովը մօր բան մը չըսեր մեզ, բայց այն անսահման որով ամէն բան բացէ ի բաց և անվախ համարձակութեամբ մը ամենուն երեսնիկը կը պողայ իրեն կուտայ այն դիրքը, որուն միակ տէրն է ինքը:

Իպսէն իր միտաւոր դիրքին բարձրութենէն կը նայի ամբողջ ծերացող Եւրոպայի վրայ, և անհատականութեան իրաւունքներու պաշտպանը կը հռչակէ ինքզինքը, կը մաքաւի այն բոլոր աւանդական սովորութիւններուն դէմ որոնք կը թուին ներկայ մարդկութեան բարոյական կեանքը կազմած ըլլալ և որոնք իրեն ակնարկին առջև կը պարզուին հոլանդի, իրենց բովանդակ փառութեամբ: «Ուրուականներ»ու մէջ Տիլկին Ալվինի կը գտնէ Բաւթոր Մանտրիսին «Այո», զիտեմ ձեր կարգ ու կանոն ըսածը. յաճախ կը կարծեմ որ այդ երկուքն են որ ծնունդ կուտան աշխարհի մէջ պատահած բովանդակ զգալիութեանց: Երբ դուք կը հարկադրէիք զիս որ հպատակեմ այդ կարգ ու կանոնին, զոր դուք պարտաւորութիւն կ'անուանէիք և որուն դէմ կ'ըմբոստանար ամբողջ հոգիս: Միայն մէկ պզտիկ թել մը քակելուց կը տեսնես որ ամբողջ կարը կը քակուի, և այն ատեն կը հասկնաս թէ մեքենայով կարուած է եղեր»:

Ուրիշ թատերգութեան մը մէջ ներկայացուած անձերէն մէկն է որ կ'ըսէ «Այլեւ չեմ հասկնար այս աշխարհը», ակնարկելով ընկերական կազմակերպութեան սկզբունքը:

## Ի. Տ Է Մ Ի Ր Ձ Ե Ա Ն

ԱՅԱՍՏԱՔԱՅԵ

ԳԵԱՄԷԼ ՓՈՂՈՑ ԹԻՒ 3 ՕԹԷԼ ՇԷՓԸՐՏՍԻ ԴԻՄԱՑ

Ելեբարական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ ակուայի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն բնականին յար և նման կեղծ ակուաներու, ցանքիներու քսիկէ, ալիւմինիումէ, ֆալցուէ, Ապահով և տոկուն թոյնալից օսկի, բլաթին, կայրն, կայրն: Լինտերու հիւանդութեանց դարմանում ելեբարական և ուրիշ միջոցներով:



ներքին Մանուկայ «Նորա»-ի մէջ ամենէն աւելի յստակ կերպով կը խօսի ի պատիւ, իր կարծիքը յայտնելով քաղաքակիրթ մարկաւորեան ընդունած բովանդակ կարգ ու սարքին վրայ և ամբողջ աշխարհէն աւելի գերազանցող համարեալ անհասկանալիները, երբ ՆՈՐԱ-ի բերնով կը հարցնէ. «Ի՞նչ է իրաւունքը թէ աշխարհին»։ Ու այս հարցումն է որ ամէն ձևերով կը հնչէ ի պատիւ ըրած գրականութեան մէջ մի սողուն քննադէմէն. ի պատիւ գրականութեան համոզումներէն մէկն է այն թէ անհասկանալի կամբողջ ու մարդկային շարժառիթով կատարուած գործ մը, կ'ազատագրէ մարդու հոգին ամէն ճնշող զգացումէ, մինչպէս սխալ կերպով ըմբռնուած և ընդունուած սովորութիւններու կառուցիչը, ու առանց կամքի զայն գործողութիւնը մարդկութիւնը խնամակալի կարօտ վերքի մը մէջ կը դնեն, մինչպէս մարդ էակները ոչ թէ ընդունուած սովորութիւններու համաձայն պէտքէն իրենց կեանքը վարել, այլ կեանք մը որ անհատական ըլլալը և զոր ապրելու համար իւրաքանչիւր անհատ իր մէջ անհրաժեշտ ուժը զգար։ Մեր դարու սկիզբներն էր որ իմաստասէր մը (Ֆիլոսոփ Ռայնհարտ) կ'ըսէր. «Ամէն մարդ իր Աստուծոյ իր կողմէն տակ կը կրէ... ասոր մէջ կ'երևայ յայտնական զանազանութիւն մը... հոգիներու զարհուրելի սպաննիչը այն է որ կը կարծէ թէ սուրբ բանի մը մէջ կարելի է հրամայել, ինչպէս մարդ գիտութեան մարգարէներու աստի կը հրամայէ»։

Այս ամենքը անսարքաւոր այն տեսակ սկզբունքներ են, որոնցմէ կարելի էր մեծ հետեանքներ հանել մարդկային ընկերութեան համար, եթէ միայն անոնք փոխանակ մենաւոր բանաստեղծի մը և իմաստասէրի մը անբնական մէջ իրենց պարզ կատարելութիւնը օգտութիւն ունեցած ըլլային իրականութեան մէջ։ Ի պատիւ կը հաւատայ լայն աստի որ բարոյական իտեալապաշտ ուղղութեամբ (idealisme) մը կարելի է աշխարհի մարդկային բնութիւնը, որ ներկայիս մէջ իրեն փճացած ու ապաստան կը թափ, սխալ կրթութեամբ մը որ և կեանքի մասին սխալ ըմբռնումով մը և հանրային ու ընկերային վիճակներու մէջ տիրող ստատիկութիւնը ու կեղծ պայմաններով, իր «Ուրուականներ»-ը կը թափն նոյն իսկ ներկայ ժամանակի սթուրգորտին մէջ ծը փաշ, ազդելով ներկայ մարդկութեան մտածելուն և զգալուն եղանակին վրայ։ «Կը կարծեմ, կ'ըսէ Տիկին Ալիսի» խօսքը Բասմոր Մանաքսին ուղղելով, որ մենք ամէնքս ալ ուրուականներ ենք։ Մեր մէջ եղածը ոչ թէ միայն այն է զոր մենք մեր հօրմէն ու մօրմէն ժառանգած ենք։ Մեր մէջ կը պտուտ-

կին նաև կարգ մը հին մեծած համոզումներ ու խել մըն ալ հին հաւատալիքներ ու նման բաներ։ Եթէ օրաթերթ մը ձեռքս առնեմ, մէջէն բան մը կարդալու համար, ալիքն ինքզինքս այնպէս մը կը զգամ իբրեւ թէ ուրուականները կը տեսնեմ կարգացած տղա-ղերուս ընդ մէջ, որոնք կ'երթան կոգսին։ Այլ բողջ աշխարհին մէջ ուրուականներ կ'ապրին։ Ինչի պայտէս կոգայ որ անոնք ծովեզերքը գտնուած աւաղին հատիկներուն չափ շատ են»։ (Շարունակելի)

### ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ԳԵՆԵՑԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎՈՋԸՆԻՆԸ

Տօք. Ռ. Ռոմ կը գրէ Լու Ռոյալի մէջ. Խիստ դժուար էր, մինչև հիմա, հիւանդութեամբ, հարուածով և կամ ուրիշ որեւէ պատճառով արուած ըթի մը իր բնական ձևը տալ, և եղած փորձերը գրեթէ միշտ անյաջող ունեցած էին։ Պ. Ժեռուէի զանոնք շտկելու գործին միջոց մը գտած է։ Աւրուած ըթին մորթին տակ պարզապէս 2-3 խորանարդ սանդիվակը՝ տաքութեամբ քիչ մը լուծուած՝ վազելին կը ներարկէ փրակալի լուծուած, վազելին կը պնդանայ 37 աստիճան ջերմութեան՝ հետեւաբար մարդկային բնական ջերմութեան մէջ. ու պարզապէս պահուի բաւական է ըթին պահանջուած ձևը տալ։ Բայց ի՞նչ կը լինի այդ նիւթը մորթին տակ։ Կենդանիներու վրայ եղած փորձերը հաստատած են որ վազելին ոչ միայն չծծուի և տեղուման չը կը մնայ, այլ և իրեն մերձակայ զոն-դերուն վրայ բարելու հակազդեցութիւն մը կը յառաջանէ։ Ասոր շուրջը կը կազմուի միասնիչ հիւսկէնի (tissu conjonctif) խաւ մը, որ հետզհետեւ ցանցի մը (անասկ մը կոնկրէ) փոխակերպով դառն իր մէջ կ'առնէ՝ իր ծակափնէքներ անով լեցնելով։ Տօք. Ժեռուէի փորձերէն անոնք որ կատարուած են 2 տարիէ ի վեր՝ ուղղուած ձևը բնաւ փոխած չեն, և նորէն գէպի առնուած ըթինը հակում մը չէ տեսնուած։

Միևնոյն մեթոդը, գործողութիւնով ուրիշ պէշաքիթ (plastique-ձևառու) գործողութիւններու մէջ, գոհացուցիչ արդիւնքներ տուած է։ Հիւսկէնի մը վրայ կարելի եղած է վերաշինել, այսպէս, ամբողջ կզակ մը, Տգու մը վերին կզակը փոխելով վարակուած ըլլալուն կը հանուի։ Ինչպէս որ միշտ կը պատահի, գոյացած սպին կծկելով գէպի վար կը բաշէ աչքին շտորին կողմը և դուրս կը ցցէ աչքին գոտար։ Սպինի և այսին տակը շարք մը ներարկումներ կ'ը-

լուին՝ օրնոցմով կարելի կ'ըլլայ վազելին ձշմարիտ կզակ մը շինել, որ ևս յի վեր կը քշէ նորէն և գէպին կոտայ գրեթէ իր բնական ձևը։ Գարձեալ վազելինը եմանօրինակ ծառայութիւններ կը մատուցանէ երբ միջոցներու (muqueuse-լորձաթաղանթ) մէջ ներարկուի։

Հետեւեալ գործողութիւնն ալ խիստ հետաքրքիր է. Գիւանք որ բնական խոռոչները, այսինքն ստամոքսը, վէսիկ (vesic փամփուշտ), մեծ աղիքին վերջաւորութիւնը կազմուած են փղեկային օղակներով, որոնք սֆինկթըր (sphincter-զատիկ) կը կոչուին։ Երբ այս օղակները ուղեղանային խոռոչը բերանաբաց (béant) կը մնայ և կը լծողու իր պարունակութիւնը դուրս հոսի։ Վիրաբուցութիւնը երբեք չկրցաւ ոչնչացած սֆինկթըր մը պարմանել։ Այդ արդիւնքին կը հասնին, ինչպէս պիտի տեսնէք, վազելինով։

Կին մը քաղցիչով (ulcération) կը կորսնցնէ փամփուշտային և միջային սֆինկթըրը։ Շատ մը օրօ-փիլոսոփ (ինքնա-ձևառու) գործողութիւններ անկարող կ'ըլլան զայն պարմանելու։ Տօք. Ժեռուէի մտածեց վազելին ներարկել սֆինկթըրի ուղեղանային գոյացած ծակին շուրջը եզրող միւրեօյին մէջ։ Ու կը յաջողի անով տեսակ մը օղակ կազմաւորել ու կատարելապէս փամփուշտին (vessie) բերանը կը գոցէ և որ միայն կը բացուէ երբ բնական կծկումով մը փամփուշտը իր պարունակութիւնը արտաքին ուղեր։ Հիւսկէնը այդ վայրիկանէն բուսուած էր։ (ՀԱՄԱԼՍՈՐԱՆ)

### Ա. Զ. Գ. Ա. Զ. Ի. Ն.

Ընդհանուր ժողովը որ վաղը նիստ պիտի ընէր, նորէն յետաձգած է իր գումարման թուականը Ն. Գ. Ա. վազելուն Եպիսկոպոսի հիւանդութեան պատճառաւ։

Նոյն պատճառով յետաձգուած է նաև Աղիքանդրիոյ թաղային ընտրողական ժողովի կազմութիւնը։

Հակառակ տեսակ մը մարդերու փափաքին և առնոց տուած անուղղակի հերքումներուն, այդ ժողովը ի՞նչ օրէն տեղի պիտի ունենայ։

Ն. Վ. Պօլոս վաշտայի բերնէն իմացած ենք մենք այս լուրը, հետեւաբար շատ ականջ չենք գներ ուրիշներու ըսածին։

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Ն. Վ. Տիգրան փաշա, առաջիկայ չորեքշաբթի Գահիրէի պիտի մեկնի զբօսական պտոյտ մը ընելու համար գէպի վերին Եղիպտոս։

Դերասանապետ Տիգր. Ս. Պէրեան կը խորհէ մենէ ծանուցանել թէ «Կարմիր թղթապանակ»-ի ներկայացումը անխախտօրէն տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի օրը։

### ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱԹԵԱՐԿԷՆ

ՁԻՆԱԴՈՒԼԻ ՀԱՄԱՐ.— Լոստոնի մէջ խիստ շատ կը խօսուի նամակի մը մասին զոր Ռօպինսոն Պանքի և Հարաւային Ալիքիի բաղմաթիւ հանքային ընկերութիւններու հիմնադիր Պ. Ռօպինսոն վերջերս ուղղած է «Թալմա»-ի և որուն մէջ կը գովաբանէ թրանսպարի և Օրանթի գիտակցութիւնը անգլիական ցրօշակին ներքեւ և կը պահանջէ ընդհանուր գիտադպար մը որ միակ միջոցն է շուտով պատերազմին վերջ մը դրնելու։

Մը Հէրի Գեմպլ Պանթլման իր վերջին առնախօսութեան մէջ յիշեց այս նամակը. — Նշանաւոր է, ըսաւ, իր բղիտած աղբիւրին և ցոյց տուած ուղղութեան համար։

ՏՕԲԹ. ԱԻՏՍ.— Կ'ըսուի թէ Տօք. Մ. Վիլհէմս պիտի երթայ 'որքէն բողոքելու համար աւստրիական կառավարութեան հաւանութեամբ։ Անգլիոյ արուած ձիու և թնդանօթի պաշարին գէմ։ Բոլորովին անհիմն է այն լուրը թէ Պօլերները հպատակելու տրամադիր են։

ՏՐՎԵԹԻ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ.— Ժընէվայի տիկին մը որ երկար առէն թրանսպար բնակած է և անձնապէս կը ճանչնայ Տրվեթը, նամակ մը ստացու անկէ ուր կ'ըսէ. «Ձեմ գիտե՛ք պատերազմը երբ պիտի վերջանայ. ես և իմ գինեւորներս որոշած ենք մինչև վերջին շունչներս պատերազմի։ Ինչի գրկած թերթերէ կ'իմանամ որ երկու կողմէն իրար կ'ամբաստանեն թէ գերիներուն հետ անգթօքն կը վարուին, մի՛ հաւատաք, այլ թերթերու ըրած պատմութիւնները սուտ են, երկու կողմէն ալ գերիներուն հետ կարելի եղածին չափ աղէկ կը վարուին։

«Մեր պէտքերը գոհացնելու համար պէտք եղածը ունենք, որովհետեւ անգլիացիներն բաւական ժամանակի չափ պաշար առինք։ Միայն ձիւներն քիչ մը կը նկուրին 10-12 ժամի բռնի վազքերուն միջոցին։

«Աստուած ընտրեց զիս ընկերներուս հրամայելու համար և մինչև վերջը պիտի շարունակեմ»։

ԹՈՒՐԻՔԻՈՅ ՆՈՐ ՄԵԾ ԵՊԱՐԳՈՐԸ.— Նոր մեծ եպարքոս Սիսի փաշա մօտաւորապէս վաթսուհի հինգ տարեկան է։

Հանր կարգաց որ՝ սրտէն կարելի չէ դնել. ցաւ. Հիմա կը հասկնար թէ ինչ եղած էր ինքը անոր համար. միմոս մը... ըսի միմոս մը— սիրոյ միմոս, ինչպէս որ սրամբտութեան միմոս էր բրէնսին համար։

Սիսիայ, որովհետեւ հաւատարմ էր որ իր պալ գինքը չէր սիրեր, ասոր համար աւելի կը ցանկար անոր, և իր կիներն յաղթանակը միայն մտածելով, թողուց որ այս անգամ ալ բաղդին դէմ թշնամանք ժայթքէ, զինքն ալ նողկալի անուններով ջախջախէ. յետոյ երբ յառաջ եկաւ ու երեսն ի վեր պօռաց։

— Ըսէ՛ք է որ զուն հայելին մէջ ինքզինքդ չես տեսած... հրեշտային վիճակիդ, պօքալի տգեղութիւնդ գիտակցութիւնը երբեք չես ունեցած՝ որ կարծեցիր թէ պիտի հաւանիմ. Ուրեմն անարգութեան օր

### ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ»-Ի (31) ԺԸՆԱՆ ՏԻՎՐԷ

### ԲՐԷՆԱ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇԵՆՈՒԱԾ ՁԷԳ

### ԳՆՈՒԽ Է.

Թող կուտար որ խօսի, աւելի զգածուած՝ բան զոր չէր ուզեր երեւի՝ այդ գործովն որ գիտէր թէ անկեղծ էր, այդ անձնութեան թննէն որ կը մատուցուէր իրեն՝ երբ ամեն բան իր շուրջը կարծես խոյ կուտար, բայց նեղարտելով այն յամոռութենէն որով կը խնդրէր իրմէ ինչ որ, հիմա մասնաւոր, ամենին տրամադիր չէր անոր շնորհելու։ Մինչև այն ատեն, վայրագ պէշարներով մը հաճոյք զգացած էր արծարծել անոր հըրայրքը, թող ապով անոր որ՝ կատակով՝

անէն իրմէ համայնքներ զոր երեւմ Բրէնսին կը մերժէր, անգամ հեշտութիւն մը զգալով ցանկութիւն ներշնչելու այդ գաճաճին, իր նայուածքներով տոչորելով զանի, յետոյ, երկու գգուանքներու մեջմեղ, նոյն իսկ այն պահուն երբ զինքը բոլորովին ձեռք անցունել կը կարծէր, արտաքին կը ձեւացնէր, յանկարծակիի եկած ամօթխածութեան շարժումներով մը ինքզինքը կը ժողվէր և կամոցակ մը գոռնէն դուրս կը վերնաւոր զայն ջգարելու ու մոլեկան վիճակի մէջ՝ ինքն իրեն ըսելով. «Այ մէյ մալ չի գար»։ Բայց այն դարձեալ կուտար, միշտ աւելի երկիւղած, միշտ աւելի սիրահարած։ Բայց այժմ, կացութիւնները փոխուած էին. ինքզինքն ազատութիւն ունէր ամեն բան ըսելու, ամեն բանի համարձակելու. երբ ինքը գէմ կը կենար՝ դժգոհ ու սրբողած, քննարկութիւններ և համայնք-

ներէ տարբեր բան ուղեղով անկէ, անհամբերութեամբ բազմալով իր շնորհանկութեանը մասին ամբողջ ձշմարտութիւնը հասկնալ, ան ձախող խօսք մը թողուց բերնէն։

— Եթէ գիտնայիր թէ ինչ հրաման կընէ քեզի բերնը, անուշիկս, պիտի պատժէիր զինքը այն եղանակով որով պիտի հընազանդէիր իր հրամաններուն։

— Ինչ կը հրամայէ կոր նայինք, հարցուց շատ գունաթափ եղած։

— Կը հրամայէ կոր որ հետո ամուսնանան... ինչի հետ ամուսնանան... ինչի հետ... կը հասկնամ։

— Այդպէս ըսաւ, գոռաց սարսուղով։

— Այսպէս ըսաւ... քորիկս։

Այն ատեն իր պալ վերէն վար չափեց միմոսը, պարտեց զայն երկար նայուածքի մը մէջ, ուր թշուառ այնչափ արհամար-

# Գ. Ե. Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ  
ԳԱՀՈՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԷՎԹԻԹԵ — ԳԼԽԱՒՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԿԷՆ ԶԱԲԹԹԵՒԻ ԵՆԷՔԸ



Սասնի գործունեայ մարդ մընէ, նշա-  
նաւոր կերպով մասցի և ընթերցասէր։ Հի-  
անալի կերպով կը գրէ և կը խօսի Թրանս-  
քէն լեռնու։

Այս չորրորդ անգամ է անուանուի որ  
Սահա փաշա Սատրապի պաշտօնին կը  
կոչուի։

Սահա փաշա իր ասպարէզը սկսաւ ստեղ-  
ծելով Հանրային Պարտքի վարչութիւնը որ  
այնքան մեծ ծառայութիւններ մատուցցւոյն Նա-  
նապէս վարեց արդարութեան նախարարի և  
Պարտքի կառավարչի պաշտօնը։ Ամէն տեղ  
օրինակելի պաշտօնէի մը յիշատակը թողոյց։

Սահա փաշա, առանց ուսումնէր բլլալու,  
շատունց ըմբռնէր է թէ, Տաճկաստան ինչ  
շահ ունի Հիւսիսային կայսրութեան հետ  
համակրական յարաբերութիւններու մէջ  
ապրելու։ Նմանապէս միշտ սիրով ընդու-  
նած է Օսմանեան կայսրութեան օգտակար  
Քրանսական ձեռնարկութիւնները։

Ուստի Սահա փաշայ անուանումը մեծ  
գոհունակութեամբ պիտի իմացուի Ֆրանսայի  
և Ռուսիոյ մէջ և գրական մընէ այս երկու  
երկրներուն հետ լաւ յարաբերութիւններու  
մէջ ապրելու Սոյլթանին փափաքին։

**ՉԱՐԸ՝ ԻՏԱԼԻԱ.**— Հոսմի մէջ կը հաս-  
տատեն թէ՛ Չարը Միտլի ատենքէն ետքը  
Վիեննայէն և իտալացի անցնելով Նիս պիտի  
երթայ։ Այս առթիւ իտալիոյ թագաւորն ու  
թագուհին պիտի ողջունեն։

**ԲԱՅԱՐԱՅԱԿԱՊԻՍ** կը հերքուի այն լու-  
րը թէ՛ զաւարթութիւն մը եղած է Շահին  
կեանքին դէմ, որուն մէջ վտանգուել են  
վեհապետին եղբայրը և բազմաթիւ իւլիս-  
ներ։ Թէ՛հրանի մէջ փակցուած կառավարա-  
կան յայտարարութիւններուն հեղինակները  
որոնց մէջ կը գտնուէին վերջերս պաշտօնէ  
հանուած երկու պաշտօնատարներ, աքսոր-  
ուեցան։ Յայտարարութեան մին զանա-  
հարուեցաւ, բայց ոչ ոք տանջանքի և մահ-  
ուան ենթարկուեցաւ։ Կարծեցեալ հինգ աք-  
սորեանքը որոնք իբր թէ՛ տանջանքի տակ  
մեռեր են, ապա եւ և բազմաթիւ Շա-  
հը որուն առողջական վիճակը լաւ է Նոյ,  
17ին թէ՛հրանէն մեկնեցաւ օրսի երթալու  
համար։ Իր եղբայրներէն երկուքը մին 10ը  
և միւրը 12 տարեկան, 13 օրէ ի վեր  
Պարսկաստանէն Վիեննա մեկնեցան ուր  
պիտի կատարեն իրենց ուսումնական շրջանը։

## Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Նախարարական Ժողովին որոշումին հա-  
մաձայն Մանուկի «Ար զ'է Մէթիէ»ի  
գլխաւոր գիշերօթիկ աշակերտներ պիտի ըն-  
դունին 12 ոսկի տարեթոշակով։

աստիճանին իջած ըլլալ կը կարծէ զիս փա-  
շան, որ կուզէ զիս քու գիրկդ նետել։

Գաճաճին անձնասիրութիւնը վերաբերուե-  
լով՝ շարաննդ ծիծաղ մը ունեցաւ։

— Այնչափ բան մինչև հիմայ թողուցիր  
որ ընեմ, սիրելիս, որ հաւատալ տուիր ին-  
ծի որ ա՛յլ աւելին թող տալու տրամադրի  
էիր... այն ատեն զիս այնչափ անարգելի  
չէ՛ր գտներ. միթէ երբէք էր տեսածս՝ երբ  
գեղեցիկն ինչպէս երեկոյն հոսէս մարդ կը  
ղրկէր, երբ ուշանայի իրեն այցելելու։

Բանած էր զայն, ձախ թերի վրայ պառ-  
կեցուցած էր անոր գլուխը և, ստիպելով  
զայն իր երեսը նայելու, հաստատեց անոր  
վրայ ահաւոր նայուածքներ, որոնց մէջ կը  
կարգացուէր այն խելայեղութիւնը որուն  
մէջ ձգած էր զինքը տակաւ առ տակաւ։  
Հայրը խոստով հնչեւ մը, խիստ շեշտ մը

— Ուստիկանութիւնը երկուշաբթի օր  
ձերբակալեց չոր, թափառաշրջիկներ որոնք  
կը մօտային Էշպէթիէի և Մուսթիի թաղ-  
րուն մէջ։

— Ռիթմի գործակալութիւնը կը ծա-  
նուցանէ թէ գրական բանակին 14 երրորդ  
հիւսարներու գունդը որ այս պահուս Եգիպ-  
տոս կը գրտնուի, մօտեւր Գար պիտի մեկնի։

— Դերձակ բանորրները Տօքթ. Բիսթիի  
նախագահութեամբ նիստ մը ունենալէ յե-  
տոյ, գործադրւի ըրին։

Պետք է յուսալ որ գործադրուի կարճ  
պիտի տեւ, կը բաւէ որ գործադրները ի-  
րենց պահանջները որոշ կերպով յայտ-  
նեն, եթէ գործարանատէրերը չի կարենան  
անմիջապէս զոհացում տալ այդ յայտագ-  
րին, խորհուրդ կուտանք երկու կողմին ալ  
որ անշահախնդիր երրորդներու իրաւարա-  
րութեան դիմեն։

— Երկուշաբթի օր Վարիէթ թատրո-  
նին մէջ, Տէր և Տիկին ՕՄալլէ շատ շա-  
հեկան բանախօսութիւն մը արտասանեցին  
աշխարհքէն շուրջ իրենց կատարած յետի-  
ստըն ճամբարգումեան պատահարներուն  
վրայ։

Ընդհանուր կերպով արտայայտուած փա-  
փաքի մը գոհացում տալու համար բանա-  
տացի աշխարհաշրջիկները այս գիշեր նո-  
րէն պիտի բանախօսեն միեւնուն թատրոնին  
մէջ։

— Պ. Զմարդ, Ն. Բ. Խտիվին անձնական  
բարեկամը Վիեննայէն Գահիրէ եկաւ և Մու-  
համէտ Սի իշխանին տունը իջաւ։

Պ. Զմարդ Խտիվին պիտի ընկերանայ  
Սուլթան կատարելիք ճամբարգումեան մի-  
ջոցին։

— Սուլթանի ընդհանուր կառավարիչ և  
Բանակին ուսումնարար Վիլիէթ փաշա շաբաթ  
առաւօտ խորթութեան մեկնեցաւ Օսմանեան  
երթալու համար ուսկից Ասուան պիտի վե-  
րադառնայ ուրաթ իրիկուն խտիվը ընգու-  
նելու համար։

## Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Լ ՈՒՐ ԵՐ

**ԱԹԷՆՔ,** 26 Նոյ.— Համալսարանը  
պարպուեցաւ ոստիկանութեան և զինուորնե-  
րու միջոցաւ։ Դասընթացները վաղը պի-  
տի սկսին։ (Հ)

**ԲԵՐԼԻՆ,** 25 Նոյ.— «Լա Կազէթ  
տի Բար» կը ծանուցանէ թէ, գաղթային  
իշխանութիւնը պտանձնած է գաղթային զին-  
ուորներու հրամանատարութիւնը, ինչ ինչ  
նահանգներու մէջ։

ունէր, զոր ինչպէս երբեք չէր լսած. վախ-  
ցաւ։

— Թո՛ղ զիս... Սալաւտի՛ն, մըռնից,  
թո՛ղ զիս, կը ցաւցնէս կո՛ր։

Բայց ան, այլևս չէր լսեր զանի. հիմայ  
կարգը իրենն էր. թող ուզածին չափ պօ-  
նար. կինըր գուրս ելած էին, ներքինին  
պարտէզն էր... առանձին էին, ոչ ոք պի-  
տի լսէր անոր ձայնը. հիկա փոխարէնը  
պիտի հատուցանէր անոր իր երեք տար-  
ուան տառապանքին... Ի՛նչ փոյթ իրեն որ  
ան զինքը չէր ուզէր. իրենն էր ան, տի-  
րուր հրամանով, ու տէր կ'ըլլար անոր բը-  
նականաբար։

Իրենց մէջտեղ կարճատև պայքար մը  
տեղի ունեցաւ՝ առանց խօսք մը ընելու.  
այն ընդարձակ անեակին մէջ կը լսուէր  
միայն իրենց հն ի հն շնչառութիւնը, մինչ-

թամիզի, Պրիւթոյի Մանչի և հարաւային  
եղերը՝ իրու նաւահանգիստներու բերքերը  
վերաշինելու գործը վերջացաւ։ Իրիկու հար-  
ի ր հէ՛ն թնդանոթներու տեղ վերջին գրտ-  
նեամբ շինուա՛ն նոր թնդանոթներ գրտնեցա՛ն։

Պօմպէյի, Մատրասի և Քոյ, Լոյի Ետի-  
տի և Կորվէլիոյ հիւսարանները իրենց կա-  
ռավարութեան կը տեղեկագրեն թէ՛ անհի-  
մըն են այն գրոյցները, իբրև թէ Միտլի  
տիւնովեան բանառակները կը գտնուին  
եղեր. ընդհակառակը իրենց միճա՛յր գոհա-  
ցուցիչ է։

Սիւմի իշխանը հիւր եղած է Լիւթրուլի  
առեւտրական սենեկին և բաղաճապար ըն-  
գունելութիւն մը կատարեց ի պատիւ իրեն։ (Ի)

**ԼՈՆՏՈՆ,** 26 Նոյ.— Լօրտ Բիշնէրի  
շաբաթական տեղեկագիրը 1,207 հոգի կը  
բարձրացնէ Պօլսոնու Նոյեմբերի մէջ կոր-  
սընցուցած մարդերու թիւը։

Պրոֆ Էստրուքերու պրոթիւնը յաջողու-  
թեամբ կը տարածուի Թրանսիլանի և Օրան-  
մի մէջ, ուր գրաւուած մասերուն կատար-  
եալ սեպհականութիւնը կապահովցնէ։

Երկաթուղիի նոր գծի մը շինութեան  
սկսուեցաւ որ Բրանսթաւ գետի մէկէն  
պիտի երկարի։ (Ի)

**ՕԹԹԱՎԱ,** 25 Նոյ.— Քանատայի կա-  
ռավարութիւնը ձիւր և համազգեստներ ա-  
պրպրեց այն զօրագուններ համար որ, հա-  
ւանականաբար ամօք մը ճամբայ պիտի ելլէ  
դէպի Հարաւային Աիւրիէ։ (Ի)

**ՊԵՐԼԻՆ,** 25 Նոյ.— Գերմանական մա-  
մուր իր սովորական գրեկակերպը նորէն  
ձեռք առաւ, սակայն ամբողջ երկրին մէջ  
անգլատիաց ցոյցերը կը շարունակուին։  
Ժողովարաններու մէջ հակադիմական ոգով  
բալուցներ կը տրուին։ (Ի)

**ՎԻԵՆՆԱ,** 25 Նոյ.— Կերմանիոյ մէջ  
Պ. Զապրուլէյի դէմ տիրող իրաւանցումը  
օրէն արձագանք չէ գտած Աւստրիոյ-Հուն-  
գարիոյ մէջ ուր զօրհրդութիւններ կան Գեր-  
մանիոյ մաքսային նոր սակացոյցներուն  
դէմ։ (Ի)

**Ս. ԲԷԹՐՍՊՈՒՐԿ,** 25 Նոյ.— Թուրք-  
թոյ կոմսին առողջական վիճակը նորէն  
յուսահատական է, բայց կը յուսացուի որ  
հիւանդին զօրաւոր կազմուածքը պիտի  
յաղթէ հիւանդութեան։ (Ի)

**ԼՈՆՏՈՆ,** 25 Նոյ.— Երանթ ըմբշա-  
մարտիկ Տիք Պուրկ ձերբակալուեցաւ Լի-  
վերուրի զրամատան գողութեան մէջ մաս  
ունեցած ըլլալուն համար։ 100,000 ոսկիի  
գողցուած յե՛կեր գողութեան և զրաւուեցան։

**ԱԹԷՆՔ,** 25 Նոյ.— Նոր նախարարու-

զեւ պուրէն ներս կուգար սաքէի մը շատ  
մեղմ ճանչիւնը, զոր մօտերը գտնւէ մը կը  
կարճունէր։

Այս վայրկեանիս, գերուհիին խողովոյց  
ուղեղին մէջէն խորհուրդ մը անցաւ. յաղ-  
թուելու մօտ էր. այդ գաճաճին վրայ ան-  
լուր ոյժ մը կար՝ զոր բարկութիւնը կը  
կրկնապատկէր. կը զգար որ կը նուաղէր.  
հազար ու մէկ յիշատակներ կը յուզուէին  
իրեն մէջ. իր անգործութեան ստուգութեան  
հանդէպ, տեսակ մը յարգանք կը զգար  
այդ մարդուն համար որ զինքը կուտարար  
կը խոշտանգէր. այլ ևս ապահով չէր թէ  
կատէր զայն։ Ան սիրած էր զինքը. ու կը  
սիրէր զեւ խնդրանքաւ, ոճի՛ր գործելու  
աստիճան... Միթէ յատկապէս պատրաս-  
տուած գործիք մը չէր ան իր վրէժը լու-  
ծելու համար։

Թիւնը սապէս կազմուեցաւ, Պ. Զալմիս  
Արտաքին Գործոց նախարար և առժամա-  
բար նախարար Արդարութեան Գործոց. Պ.  
Ֆիլաթոս Ներքին Գործոց և Պ. Բօթթաս Պա-  
տկա յիշխան նախարար անուանուեցան։ (Ռ)

**Ա. Զ. Գ.**

**ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՅԻ ԳԱԼԵՆՏԷՐ**  
**ՓԷՇՏԻՄԱՆՃԵՍԸ.** արեւելեան և եւ-  
րոպական երաժշտութեան մասնա-  
գէտ, Գլուխ այս անգամ Գահիրէ  
եկած ըլլալով, պատրուած է դաշ-  
նակի դասեր տալ, նորագոյն մէթո-  
տով, իրեն գիմող աշակերտաց.  
Փափաքողները պէտք է գիմեն  
Տիւր Ս. Մաճարեանի գրասենեակը,  
Պապ-Էլ-Հատիս փողոց թիւ 31։

10—20

## ՏԻԿԻՆ Է. Ա. ԱՐՍԼԱՆՅԱՆ ԴԵՐՉԱԿՈՒՅԻ

Գաղաքիս մէջ ծանօթ այս զերձակուհին  
պատիւ ունի ծանուցանելու իր բազմաթիւ  
յաճախորդներուն ինչպէս նաեւ յարգող հա-  
տարակուցեան թէ՛ այս անգամ իր Պապ-  
Էլ-Լաքի արշըղիէն փոխադրած է Պապ-Էլ-  
—Հատիս փողոց Տէպպանէի նորաշէն տան  
մէջ, առաջին յարկ թիւ 3 արարթամանը։

6—10

## ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՅՍ ՍԱԿԱՐԱՆ ԱՐԺԵԹՈՒՂԹՔ

|                                        |               |
|----------------------------------------|---------------|
| Աղեքսանդրիւ, 27 Նոյեմբ.                |               |
| Բրիտիշիէի . . . . .                    | 100 /—        |
| Իւնիթիէ . . . . .                      | 106 /—        |
| Տալիսիս Սահիթ . . . . .                | 103 /—        |
| Տօմանեալ . . . . .                     | 105 1/2       |
| Թրքական Բանասիրտէ, սեռի Օ . . . . .    | 24 42         |
| Բու մէջի Երկաթուղի . . . . .           | Ֆր. 106 /—    |
| Գանալ աք Սիւէզ . . . . .               | » 3790 /—     |
| Գանալ աք Սիւէզ օպլիկ . . . . .         | » 645 /—      |
| Նաշ. պանք օք Էնիթ . . . . .            | Ա. Ռ. 11 1/16 |
| Աղէքս. Թրամվէյ (բրիւ.) ֆր. . . . .     | 49 1/12       |
| Աղէքսանդրիոյ Թրամվէյ . . . . .         | » 24 1/2      |
| Բրէտի ֆօնտիէ և գ. արքիթ . . . . .      | » 553 /—      |
| Բրէտի ֆօնտիէ 3 0/0 . . . . .           | » 264 /—      |
| Ջրի Ընկ. Գահիրէ . . . . .              | » 635 /—      |
| » Աղէքսանդրիւ Ա. Ռ. . . . .            | » 36 1/4      |
| » Թանթա . . . . .                      | » 12 /—       |
| Պէհէրայի անանուս ընկ. . . . .          | » 48 /—       |
| Իճիքլըն մար. էթիս օպլ. 5 0/0 . . . . . | » 100 /—      |
| » » արքիթ . . . . .                    | » 0. 16. 8    |
| » ուղի ընտ ուսու . . . . .             | » 0. 16.      |
| Նուսկովիչ Օթէլ . . . . .               | » 4. /—       |

Աղաչաւոր նայուածք մը վերցուց անոր  
երեսին, խնամք և երկիւղած ցոյց տուաւ  
ինքնինքը։

— Մտիկ ըրէ՛... ըսաւ վերջապէս. ալ  
չեմ ոգորիւր. զուն ինձմէ ուսով ես ու կըր-  
նաս զիս բռնագրաւել. բայց աւելի նախա-  
մեծար չեմ համարեր իբրև քու կինդ, իմ  
ազատ կամքովս, առնել զիս, և ամենուն  
աչքին առջև իբրև քու կինդ առնել տանիլ  
զիս տունդ։

Այս խօսքերը լսելով, այնչափ մեծ զար-  
մանք մը զգաց՝ որ թողուց զայն։

Այդ զարարի պահէն օգուտ բաղեց ինք-  
պալ ու թիչ մը հեռացաւ ու նշան ընելով  
անոր որ նստի, լուրջ ձայնով մը ըսաւ  
անոր։

(Շարունակելի) Թարգմ. Զ. ՍԵՐՈՅԱՆ

# Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՅ ԵՒ ՎԼԱՍՈՒՄԵՆԻ

ԳՐԱԴԱՆ ԲԵՐԼԻՆ

ՊԵՏԻՆ



1454564 184372

ՄՈՒՉՈՒԱՆ, ԼԱՅԻՆ սակագները և ապահովագրութեան վանապան գրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրուիք. — Առատաճեռն պայմանները, Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲՐԻՋԻՍ և Ժ. ՎԱԼԵՆԻՆ, Ընդհ. ներկայացուցիչք։  
Ազգբասադորիս Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալութար. Դ. ԵԿԻՄԻՈՅ Դեղ-Գործակալ ի Գահիրէ

**ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ՖՈՆՕԿՐԱՖՆԵՐՈՒ**